

3667

Եղիշեալիք

Կարժմին Երևան

1319

891.71

Բ-85

թ. 1898

W 1559
"ՀԱՅԻ" ԳՐԱԴՐԱՄԱԿԱՆ ԲԱՆԱՐԱ

91.71-
հ-85

Ի Վ. Ա. Ն Ո Վ. Ի Զ

124

ՎԵՐԺՈՒՀՈՒ ԵՐԱԶԼ

Թարգմ. ռուսերէնից

Լ. Թ. Ա. Դ.

ՀՐԱՏ. ՄԱԿ. ՍՏԵՓԱՆԵԱՆ



2003

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան վրաց Հրատ. Ընկ. || Տիպոգր. Գրադ. Իզդ. Տ-վա.
1898

2011

85

4

Ի Վ Ա Ն Օ Վ Ի Զ

ՎԱՐԺՈՒՀՈՒ ԵՐԵԶԸ

Թարգմ. ռուսելէնեց

Լ. Թ. Ա. Դ.

ՀՐԱՏ. ՄԱԿ. ԱՏԵՓԱՆԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան վրաց Հրատ. Ընկ. || Տիպogr. Գրզ. Իզդ. Տ—վա.

1898

ՎԱՐԺՈՒՀՈՒ ԵՐԱԶԸ

Ուրախ սկսուեց Մարիա Իվանօվնայի համար նրա ուսումնարանի յօբելեանի օրը։ Մաղթանքից յետոյ աշակերտների և աշակերտուհիների երգեցիկ խումբը երգեց։ յետոյ ուսումնարանի յարդոյ հոգաբարձուն, — որ պաշտօնաթող մի կապիտան էր, — յայտնեց իւր զնորհակալութիւնը Մարիա Իվանօվնային նրա «անխոնջ աշխատութեան համար յօգուտ ժողովրդական լուսաւորութեան»։ Աշակերտուհիները նոյնպէս ուրախ էին. նրանք ճռուողում էին, ինչպէս ճնճուկները գարնանային առաւօտը։ Օրիորդը ինքն էլ ուրախ էր։

Տասն և հինգ տարի է, որ նա վարժուհութիւն է անում, ուղիալն կարելի է, և' օրիորդական գիմնազիայում, և' սկզբնական ուսումնարանում. ունի և' շատ մասնաւոր դասեր։ Նա աշխատակցում է և ժողովրդական դասախոսութեանց մասնաժողովին, և' մանկավարժական ընկերութեան, և' գրադարանական յանձնաժողովին։ Ու-

Дозволено цензурою. Тифлисъ, 26 февраля 1898 года.

սուցչական գործունէութեան մէջ է նրա ողջ կեանքը, նրա ուրախութիւնը և պարձանքը: Օրիորդը վերադառնում էր տուն այն հաճելի գիտակցութեամբ, որ նրա գործունէութեան համար «սրտագին շնորհակալութիւն կը յատնի նըրան ուսւ ժողովութդը»:

Պարզ և տաք օրը ներդաշնակ էր նրա տրամադրութեան հետ: Մի լիշողութիւն միայն սև ամպի պէս երեան եկաւ նրա կենսուրախ տրամադրութեան մէջ: Նա մտաբերեց ժողովրդական դասախոսութեանց մասնաժողովի վերջին նիստը: Ներկայ էր այդ նիստին և մի նոր անդամ—մի մաշուած, բարձրահասակ վարժուհի, որ եկել էր գիւղից: Նա առաջարկեց կարդալ ժողովրդական ուսումնարանների մասին գրութագած լրագրական այն յօդուածը, որի մէջ ասվում էր, թէ վերջին ժամանակներում ուսումնարանների տիպը ընկած է, թէ ժամանակակից ուսուցիչները և վարժուհիները այնքան սահմանափակել են իրանց հայեցքը գէպի ուսումնարանի բուն նպատակը, որ մըքը գիւղի ուսումնարանի գուն նպատակը, որ մըքը գարդացման կենդանի գործը վերածել են տաւոր գարդացման կենդանի գործը վերածել են գրագիտութիւն ուսուցանելուն՝ սոսկ գրագիտութեան համար:

Այդ յօդուածը վրդովեց մասնաժողովի անդամների խաղաղ տրամադրութիւնը, ինչպէս աներդաշնակ մի ձայն խանգարում է երաժշտական խաղաղ մելոդիան: Գիւղական վարժուհին ասաց, որ

յօդուածում արտայայտած միտքը մի դառն ճշմարտութիւն է: Ամենքը միասին տաք-տաք նրա գէմ էին խօսում. նրան ապացուցանում էին, որ առաջնորդող յօդուածի հեղինակը յոռետես է, որ այդ գրպարտութիւն է, որովհետեւ ուսուցիչները և վարժուհիները իրանց գործը տանում են, ինչպէս հարկաւոր է:

Եւ այժմ յանկարծ Մարիա Իվանօվնան մտաբերեց այն նիհար վարժուհուն և լրագրական մերկացնող յօդուածը, որից փոքր ինչ խանգարուեց նրա ուրախ տրամադրութիւնը:

Նա եկաւ տուն և պառկեց հանգստանալու: Երբ նրա մտքերը սկսեցին արդէն ընկղմուիլ քնի սև ալիքների մէջ, նոյն անհաճոյ լիշողութիւնը կրկին երեան եկաւ:

Յանկարծ Մարիա Իվանօվնան իրան տեսաւ մի բազմամարդ ժողովում:

Կարծես, դատարանի դահլիճ է սա, մըտածեց նա. բայց այս ինչ տարօրինակ բան է. գիւղացիները նստած են այնտեղ, ուր պէտք է լինեն դատաւորները:

Արդարեւ դատաւորի սեղանի առաջ նստած էր մի սպիտակամօրուս գիւղացի, որ թերթում էր իւր առաջ գրուած «գործը»: Նրա կողքին նստուած էին գարձեալ գիւղացիներ, որոնցից մէկը՝ գնչուի տիպով, թուլս մազերով մի մարդ էր, միւսը՝ շիկահեր, կապտագոյն ուրախ աչքերով: Դատախազը—երի-

տասարդ և գեղեցիկ մի մարդ՝ դարձեալ գիւղացի
եթ. երդուեալ դատաւորները՝ նոյնպէս:

—Այս ինչ տարօրինակ բան է, մտածում էր
Մարիա Իվանօվնան. նրանց դէմքի վրա նկատելի
չէ ոչ «քթամիտ համերատարութիւն» և «էլ
ամշտական վախ». սրանք գեղջուկներ են, բայց տե-
սէք թէ ինչպիսի ինտելիգենտ արտայատութիւն
ունին նրանց դէմքերը:

Նա աչքը դարձեց դէպի այն նստարանները,
ուր հասարակութիւնն էր նստած:

Ինչքան ծանօթներ կան...: Բոլոր վարժուհի-
ներն էլ ժողովուել են. ժողովրդական դասախոսու-
թեանց մասնաժողովի բոլոր անդամները՝ նոյնպէս.
ահա գիւղական մաշուած վարժուհին, ահա և
անհաճոյ յօդուածի հեղինակը: Յանկարծ Մարիա
Իվանօվնան նկատեց, որ բոլորի հայեացքները ուղ-
ղուած էին դէպի իւր կողմը: Այդ ընդհանուր ու-
ղագրութեան առաջ նա իրան շատ վատ զգաց և
կարմրեց:

—Ինչու ինձնով այսչափ հետաքրքրվում են
և ում արդեօք պիտի դատեն այս գեղջուկները,
մտածեց նա, և այժմ միայն նկատեց, որ ինքը
նստած է մեղադրեալների նստարանի վրայ, իսկ նրա
ծանօթ երդուեալ հաւատարմատարը դառնալով դէ-
պի նա՝ շշնջաց. «Ես պէտք է պաշտպանեմ ձեզ,
բայց յոյս չունիմ, որ արդարացնեն»:

Մարիա Իվանօվնան ապշեց: Նրան, որ ամե-

նափոքրիկ յանցանք չէ զգում իւր մէջ, պէտք է
դատեն, այդ բաւական չէ, դեռ յոյս էլ չը կալ,
որ նրան արդարացնեն.... Վրդովմունքը, իբրև
հետևանք սարսափելի անյալտութեան, ամբողջո-
վին տիրեց նրան:

Ծերուկ նախագահը բարձրացը գլուխը:

—Խորին վշտով համակուած՝ պէտք է յայտ-
նեմ, որ դուք յանձնուած էք ժողովրդական դա-
տին, արտասանեց նա Մարիա Իվանօվնայի վրայ
նայելով:

Այդ ձայնը դատաւորի սառն ձայն չէր. խօ-
սողը աւելի նմանում էր մի հօր, որ դառնացած
էր իր սիրելի աղջկայ գործած յանցանքով:

—Ես պիտի դատուեմ... դա մի վրդովեցու-
ցիչ թիւրիմացութիւն է, կը կը կտրած պատաս-
խանեց Մարիա Իվանօվնան:

—Գիւղադրաբար թիւրիմացութիւն չը կալ,
հեղութեամբ պատասխանեց նախագահը. դուք
մեղադրվում էք այն բանում, որ չէք կատարել—
իբրև կրթուած մարդ—ձեր՝ դէպի տգէտ ժողովուր-
դը ունեցած պարտաւորութիւնները:

Մի քանի վայրկեան Մարիա Իվանօվնայի լե-
զուն կապուեց զարմանքից:

—Ես բողոքում եմ այդ անարդարութեան
դէմ, խօսեց նա լուզմունքից խեղուած ձայնով.
Ես ապրում եմ միայն նրանով, որ գործում եմ
ժողովրդի լուսաւորութեան համար.... Եւ դէպի

ժողովուրդը ունեցած իմ սիրոյս համար այժմ ինձ
կամենում են դատի ենթարկել.... Դա մի վրդո-
վեցուցիչ, սև ապերախտութիւն է....

Նախագահը թոյլ տուեց նրան իր ուզածը ա-
սել, յետոյ նոյն հեզ և տխուր ձախով արտասանեց.

— Դուք տաքացաք առանց իմանալու թէ
բանը ինչումն է: Այս ըոպէին ինքներդ էլ կը հա-
մոզուէք, որ ձեր բարկութիւնը և յանդիմանու-
թիւնները գէպի ժողովուրդը՝ նրա ապերախտու-
թեան առթիւ՝ միանգամայն անարդար են: Զէք
հաճիլ, արդեօք, մասնակցելու ճշմարտութիւնը
լուսաբանելուն, նախօրէն հրաժարուելով այն մըտ-
քից, որ դուք անսխալական էք:

— Խօսեցէք, ես լսում եմ... ասաց Մարիա Ի-
վանօվնան:

— Դուք մեղադրվում էք այն բանի մէջ, շա-
րունակեց նախագահը, որ վարժուհի լինելով՝ չէք
ընթացել այն ճանապարհով, որ ցոյց է տալիս
մանկավարժութիւնը: Մի անգամ ոտ դնելով զի-
ջումների սայթաքուն ճանապարհի վրայ, դուք փոքը
առ փոքը իւրացըել էք ժողովրդական ուսումնարանի
վերաբերութեամբ մի հայեացք, որ շատ որոշ կեր-
պով արտայալտվում է ձեր սեփական բառերով՝
«գոնէ մի բան»: Ի նկատի առնելով, որ մանկա-
վարժը, գործունէութեան այդպիսի նշանաբան ու-
նենալով՝ չէ կատարում իւր ուղղակի պարտակո-
նութիւնը, որ ժողովրդական կը թուածիւն գործում

հաշտուիլ այդ «գոնէ մի բան»-ի հետ՝ չէ նշանա-
կում սիրել ժողովուրդը, — դատարանը մեղադրում
է ձեզ անտարբերութեան համար, որ դուք ար-
տայալտել էք գէպի ժողովրդական այն մեծ կա-
րիքը, որ նա ունի ուսման մէջ, անտարբերութիւն,
որ արտայալտվում է ձեր—ինչպէս վարժուհու—
պարտաւորութիւնների սխալ կատարելու մէջ:

— Ես մեղաւոր չեմ համարում ինձ, խստու-
թեամբ պատասխանեց օրիորդը:

Նախագահը հոգոց քաշեց և ասաց.

— Դատարանը պիտի դիմէ վկաների հարց ու
փորձին, քանի որ մեղադրուողը իրան մեղաւոր չէ
ճանաչում:

Պահիմը լցուեց Մարիա Իվանօվնայի նախկին
աշակերտներով և աշակերտուհիներով: Նրանց մէջ
կային և՛ գիւղացիներ, և՛ քաղաքացիներ, և՛ կա-
լանաւորներ, և՛ պճնազարդ տիկիններ: Օրիորդը
նկատեց իրան համակրող շատ հայեացքներ և դը-
րանից նրա սիրտը թեթևացաւ:

— Նրանք անշուշա կը հերքեն այս զզուելի,
ստոր մեղադրանքը, մտածեց նա և ուրախացաւ,
երբ նախագահը դուրս կանչեց նրա սիրելի աշա-
կերտուհիներից մէկին:

— Ի՞նչ կասէք դուք մեղադրուողի մասին, ի-
բրև վարժուհու, հարցորեց նա:

— Ի՞նչ կասեմ.—սկսեց խօսել մեծ ոգեսրու-
թեամբ մատաղահաս տիկինը, — կասեմ այն, ինչ

որ ասում են ամենքը... Մարիա Իվանօվնան շը-
նորհալի վարժուհի է: Այսքանը չէ միայն: Նա
վարժուհու իդէալ է. ամբողջ քաղաքն էլ նոյնը
կասի ձեզ: Նա մի ըռպէ հանգստութիւն չունի...
Նա իւր անձը ամբողջովին նուիրել է լուսաւորու-
թեան վեհ գործին... Նրա սիրտը եռում է դէպի
ժողովուրդը ունեցած սիրուց. Նա ապրում է այդ
սիրով... Նա այնքան բարի է.., այնքան սիրող...

— Ներեցէք, որ ընդհատում եմ ձեզ, ասաց
նախագահը.—դատարանը խնդրում է ձեզ մէջ բե-
րել փաստել, որոնք ցոյց տային մեղադրուողի ար-
ժանաւորութիւնները, որպէս վարժուհու:

— Ես արդէն ասացի, որ օրիորդը շատ լաւ վար-
ժուհի է, պատասխանեց տիկինը բարկանալով, որ
ընդհատեցին նրա խօսքը, որ կարկտի պէս թափ-
վում էր նրա բերնից:

— Այո, բայց հարկաւոր են ձեր այդ կարծի-
քը հաստատող ապացոյցներ:

— Այս, ինձ չեն հաւատում... տարօրինակ
բան: Երբ ես մի բան ասում եմ, ուրեմն ճէշտ
է....: Մարիա Իվանօվնան դէպի մեզ եղել է միշտ
բարի... Նա մեզ չէր պատժում. միշտ մեզ տանում
էր զբունելու, ցոյց էր տալիս պատկերներ, Տե-
տաքրքիր պատմութիւններ էր անում. Նրա մօտ
ուսում առնելը այնքան հեշտ էր... Մենք նրա
հետ ցրուցում էինք, ինչպէս մեր ընկերուհու հետ...
Մի խօսքով նա ամենալաւ վարժուհին է: Դատա-

որները ինձ չեն հաւատում,—այդ ինձ գարմաց-
նում է... ամեն մարդ հաւատում է իմ խօսքին...
Ես զարմանում եմ թէ ինչու...

— Թոյլ տուէք ինձ մի հարց, ընդհատեց նրան
դատախազը իւր հաճելի ձայնով. Մարիա Իվանօվ-
նան սովորացրել է ձեզ քննադատաբար մտածել:

— Քննադատաբար մտածել, — բացականչեց
վկայող տիկինը բարկութեամբ, ահա թէ ինչ բանի
մէջ էք ուզում նրան մեղադրել... Զրպարտութիւն
է, զզուելի զրպարտութիւն է այդ: Երբէք Մարիա Ի-
վանօվնան այդպիսի գործով չի պարապել...: Քննա-
դատաբար մտածել: Մարիա Իվանօվնան, այս ամե-
նաբարի հոգին, այս հրեշտակի սիրտը այդպիսի մի
շարիք չի սերմանի... Տէ՛ր Աստուած... Եւ այդ ով
է, որի լեզուն զօրել է նրան այդպիսի յանցանքի մէջ
մեղադրել...: Ահա թէ ինչ կասեմ ձեզ. մի ժա-
մանակ ամուսինս քիչ էր մնացել, որ սկսէր քննա-
դատաբար մտածել... Նրա բաղդից է, որ ամուսնա-
ցաւ ինձ հետ. Ես շատ շուտով հանեցի նրա գլխից
այդ լիմարութիւնը, թէ չէ ով գիտէ, ինչ կը պատա-
հէր...: Օրիորդը քննադատաբար մտածել է սովո-
րեցնում...: Ով այդպիսի բան ասի, ես նրան լիրք
ստախօս կանուանեմ... Ես կը թքեմ նրա անամօթ-
երեսին, Աստուած է վկայ...: Այդ հրեշտակի սիր-
տը, այդ...

— Բաւական է, ասաց նախագահը:

Բայց տիկինը չըկարողացաւ միանգամից կանչառնել, ինչպէս երկաթուղու սրարշաւ գնացքը:

— Քննադատաբար մտածել... կրկնում էր նա. մարդկային սերնդի թշնամին միայն կարող է քննադատաբար մտածել. և նա այդպէս է անում, որ կորցնի մարդկանց... բայց որ Մարիա Խվանօվնան էլ, է՛հ. Է՞նչ էք ասում...

— Բաւական է. դատաւորները շատ շնորհակալ են ձեզնից, որ դուք այդպէս չերմ կերպով օգնեցիք նրանց ճշմարտութիւնը գտնելու, ասաց նախադահը:

Բայց վկայող տիկինը ուզում էր շարունակել այդ օգնութիւնը, այն ժամանակ մօտեցաւ նրան նրա ամուսինը և ասաց:

— Բաւական է, դատարանը խնդրում է քեզ լուել:

Նա դժգոհութեամբ նստեց իւրտեղը և փնըթինթաց:

— Ի՞նչ անկիրթ են... թոյլ չեն տալիս ասելիքս վերջացնեմ... իսկոյն երևում է, որ ուսմիկներ են...

Նախադահը դուրս կանչեց մի նիշար և շիկահեր օրիորդի, որի դէմքը վախ էր արտայալտում:

— Սովորեցնում էր ձեզ մեղադրուողը քննադատաբար մտածել, հարցըց նրան դատախաղը:

— Ա՛խ, ոչ. և ես դրա համար շատ շնորհակալ եմ նրանից: Թոյլ առողջութիւն ունեցողի հա-

մար մտածելը շատ վնաս է: Ես վաղուց թոքախտից մեռած կը լինէի, եթէ սկսէի քննադատաբար մտածել:

— Բայց գուցէ, մէջ մտաւ վարժուհու վաստաբանը, մեղադրուողը միայն ձեզ չի սովորացը քննադատաբար մտածել, ի նկատի առնելով ձեր թոյլ առողջութիւնը. միւս աշակերտուհիներին գուցէ...

— Ոչոքի նա այդպիսի բան չի սովորացը լունդատեց նրան վկան:

— Խվանօվ, ինչո՞ւ դուք կալանաւորի շորերունիք հագած, հարցըց նախագահը մի նոր վկայի:

— Դատաստանական քննութեան տակ եմ գըտնվում, խուլ ձայնով պատասխանեց Խվանօվ:

— Ի՞նչ գործի պատճառով:

— Այն պատճառով, որ ես սպանեցի կախարդ կնոջը. նա մեր ամբողջ զըշակալքի կովերը կոտորում էր, հարկաւոր էր գիւղի շահերը պաշտպանել:

— Դուք եղել էք աշակերտ մեղադրուողի մօտ:

— Այո՛, օրիորդը ինձ դաս է տուել: Բարի օրիորդ է... ոչինչ վատ բան չի կարելի ասել նրա մասին... հետաքրքիր պատմութիւններ էր կարդսւմ:

— Զէք լիշում այդ պատմութիւններից որ ե է մէկը:

— Ինչպէս չէ... կարդում էր մի դարբնի մասին, որ սատանալի վրայ նստած գնում էր մի աղջրկայ համար կօշիկներ բերելու:

— Ասացէք, խնդրեմ, — խօսեց պաշտպանը, —
երբ որ օրիորդը կարդում էր ձեզ մօտ այդ պատ-
մութիւնը, նա ի հարկէ (նա շեշտեց այս բառը),
բացատրում էր ձեզ, որ սատանայ չը կայ:

— Ի՞նչպէս կարելի է, աշխուժութեամբ վրայ
ըերեց վկան, այսչափ խելօք օրիորդը միթէ այդ-
պիսի լիմարութիւն կասի, թէ սատանայ չը կայ...
Եթէ սատանայ չը լինէր, կախարդ էլ չէր լինի և
այն ժամանակ ես էլ բանտում նստած չէի լինի:

Կանչեցին մի ուրիշ վկայ — երիտասարդ հիւսն
էր նա:

— Դուք յաճախում էիք ժողովրդական դասա-
խօսութիւններին:

— Յաճախում էի, բայց յետոյ թողեցի:

— Ի՞նչո՞ւ:

— Նրա համար, որ այս օրիորդը (նա ցոյց
տուեց Մարիա Իվանօվնայի վրայ) կարդում էր ոչ-
խակական գրքեր:

— Ո՞ր գրքերն էք դուք ոչ-խակական անուանում:

— Ոչ-խակական գրքեր՝ գիւղացիների գրքերն
են, պատասխանեց հիւսնը ծաղրելով. այն գրքերը,
որոնք գիւղացիների համար են նշանակուած, բայց
խակական գրքերը ձեր՝ պարոններիդ գրքերն են:
Եթէ խակական գիւղքը օրիորդը կարդայ, նրա հա-
մար այդ օգտակատ կը լինի, իսկ եթէ գիւղացին
կամ նրա կինը կարդան՝ նրանց կը վնասի: Օրի-
նակի համար ախալէս ասեմ. եթէ օրիորդը նարինջ

ուտի, այդ նրան բաւականութիւն կը պատճառի,
իսկ եթէ նարինջը տաք իմ Մատրեօնալին, նրա
փորը կը ցաւի, մինչդեռ խաշած տանձը նրա հա-
մար շատ օգտակար է:

Ուրախութեան մի քրքիչ անցաւ հասարա-
կութեան մէջ:

— Բայց որովհետեւ օրիորդը գիւղացիների հա-
մար շատ է հոգս քաշում, այդ պատճառով էլ նա
խակական գրքերը նրանց մօտ չի կարդում, որ չը
վնասուին:

— Իսկ դուք ինչպէս իմացաք, որ օրիորդը ձեզ
մօտ կարդում է ոչ-խակական գրքեր, հարցրեց դա-
տախազը:

— Եատ հասարակ կերպով: Մի պարոնի հա-
մար սեղան էի շինել. երբ տարայ՝ նրա մօտ տե-
սայ շատ գրքեր: Խնդրեցի, և նա տուեց ինձ մի
հատ: Կարդացի և հասկացայ, որ Մարիա Իվանօվ-
նան լաւ օրիորդ է, բայց մեզ համար լաւ գրքեր
չի կարդում: Այն ժամանակից սկսած ես ժողովը-
դական դասախոսութիւններին այլ ևս չեմ յաճա-
խում, այլ այն պարոնից գրքեր եմ վերցնում կար-
դալու:

Ծանրութեամբ մօտեցաւ սեղանին մի նոր
վկալ — ժողովրդական դասախոսութեանց մասնա-
ժաղովի նախագահը:

— Բացատրեցէք, խնդրեմ, — ասաց դատախա-
զը, — ինչ նպատակի է դիմում ժողովրդական դա-

սախօսութեանց ձեր մասնաժողովը, և ի՞նչ դեր է կատարում նրա մէջ մեղադըռուովը:

—Իմ նախորդը արդէն պատասխանեց այդ հարցին: Ծաղրելով նա մատնացոյց արեց գրքերի երկու տեսակի բաժանուած լինելու վրայ—գիւղացիների և պարոնների: Փաստօրէն նա իրաւ է, բայց սխալ-վում է նա փաստի գնահատութեան մէջ: Մենք՝ վում է նա փաստի գնահատութեան մասնայսինքն ժողովրդական դասախոսութեանց մասնաժողովը՝ շատ լուրջ կերպով ենք վերաբերվում գլուքերի այդպիսի բաժանման, գտնելով նրա մէջ խորին միտք: Հազիւ թէ կարեոր լինի ապացուցանել, որ ժողովրդի համար վնասակար է կարդալ այն գրքերը, ինչ որ մենք ենք կարդում: Եթէ այդպէս ըլ լինէր, չէր ծագէլ այն հարցը, թէ «ի՞նչ պէտք է կարդայ ժողովուրդը», այլ կը կարդայինք նրա համար այն, ինչ կարդում ենք մենք: Մինչդեռ մանկավարժական ամենալաւ ուժերը այդ հարցն են մշակալում, և ժողովրդական դասախոսութեանց մասնակում (որի նախադահը լինելու պատիւն ունիմ) ժողովի (որի նախադահը լինելու պատիւն ունիմ) ամբողջ գործունէութիւնը կայանում է հէնց նրա ամբողջ գործունէութիւնը կարելի կարդալ ժողոմէջ, որ որոշի թէ ինչն է կարելի կարդալ ժողոմէջ, որ որոշի թէ ինչն է կարելի կարդալ կը զովրդի համար, և ինչը չը պէտք է կարդալ: Կը կովրդի համար, և ինչը չը պատասխանութիւնը՝ ես ամենելով նախորդ վկայի համեմատութիւնը՝ եմ որ մենք մեծ նախ լրջութեամբ յախարարում եմ, որ մենք մեծ նախ լրջութեամբ յախարարում ենք, որ չը լինի թէ պատասխանաժողով հետևում ենք, իմանած գովակը, խմեց, հազար և ապա շարունակեց.

նարինջը... բաւական է մատնացոյց անել լիշեալ մրգերի գնի տարբերութեան վրա, որ իսկոյն նկատելի լինի այն վնասը, որ կառաջանալ, եթէ Մատրեօնան նարնջի համը առնի: Եթէ նարինջը նրա դուրը գալ, խաշած տանձով նա այլ ևս չի բաւականալ... իսկ նարնջի համար նա փող չունի. այդպիսով նա դժգոհ կը լինի իւր ներկայ գրութիւնից և նրա կեանքը կը թունաւորուի...: Սակայն պիտի նկատեմ, որ մեր մասնաժողովը դէպի ժողովուրդը ունեցած իւր հոգացողութեամբ այնպիսի ծայրայեղութիւնների մէջ չէ ընկնում, ինչպէս ուրիշ մասնաժողովներ: Այսպէս օրինակ, անցեալներում մենք քննում էինք Տամբօվ քաղաքի ժողովրդական դասախոսութեանց մասնաժողովի մի որոշումը, որով նրանք Տօլստօյի «Երկու ծեր» վերնագրով պատմութիւնը վնասակար էին համարել ժողովրդի համար: Մենք տասը ձայնի առաւելութամբ—այդ թւի մէջ և՛ Մարիա Խվանօվնան,—ընդդէմ չորսի որոշեցինք, որ Տամբօվի մասնաժողովի վճիռը ներկայ դէպիում սխալ է, որովհետեւ նըրանց երկիւլը, թէ գիւղացիները «Երկու ծերը» կարդալուց յետոյ կը դադարէն սրբավայրերը յաճախելուց՝ բոլորովին անհիմն է:

Վկան մօտեցաւ փաստաբանի սեղանին, շուրջ ածեց բաժակը, խմեց, հազար և ապա շարունակեց.

—Անցնում եմ այժմ ժողովրդական դասա-



խօսութեանց մասնաժողովի անդամների բնորոշման։ Մեծամասնութիւնը—ինչպէս և ուրիշ մասնաժողովների մէջ—անձայն է, և ես խըդմտանքով խօսելով, պիտի վկայեմ, որ մանէկէնների դերը նրանք կատարում են ամենայն ճշտութեամբ։ Ունինք մի հուետոր, որ ի չարն է գործ դնում մեր համբերութիւնը. կան և մի-երկու անդամներ, որոնք խօսում են չափաւոր կերպով, իսկ ինչ վերաբերում է Մարիա Խվանօվնային, պէտք է ասել, որ նա խօսում է քիչ, բայց գործում է ամենից շատ։ Կարդում է ժողովրդական լսարանում, կազմում է նիստերի արձանագրութիւնները, կազմակերպում է ներկայացումներ և այլն։

—Ասացէք, խնդրեմ, —հարցը դատախազը, —ի՞նչպէս է վերաբերվում մեղադրուողը դէպի ուսուցիչների այն պարտաւորութիւնը, որի համաձայն նրանք պէտք է աշխատեն արմատախիլ անել ժողովրդական նախապաշարմունքները։

—Կոշտ-կոպիտ նախապաշարմունքների դէմ նա կարեւոր է համարում կոռուել. ալսպէս օրինակ, նա ոչ մի առիթ ձեռքից բաց չի թողնում հերքելու ժողովրդական այն սնոտիալաշտութիւնը, որ իբր թէ երկիրս լենվում է վիշապի մէջքի վրայ այդ նախապահով էլ նա ամենից լաճախ կարդում է երկրի մասին. իսկ մի որոշ կարգի նախապաշարմունքների նա չի մօտենում ամենեին,

Ենթադրելով որ ժողովրդին նրանցից զրկելը կարող է նրան տանջանք պատճառել։

—Իհարկէ... Մատրեօնան կմկսի լաց լինել խաշած տանձի համար, բացականչեց հիւսնը։

—Անցեալ տարի ձեր գիւղում բերք չեղաւ, հարցը դատախազը նոր վկային։

—Այո՛, չեղաւ։

—Ի՞նչ էք կարծում, ի՞նչ պատճառներից է առաջ դալիս անբերիութիւնը։

—Յայտնի բան է, թէ ինչ է պատճառը. Աստծուն բարկացնում ենք... Եթէ քըիստոնէի պէս ապրենք, այն ժամանակ անբերիութիւն էլ չի լինի։

—Դուք Մարիա Խվանօվնայի աշակերտն էք եղել։

—Այո՛, սովորել եմ... բարեսիրտ օրիորդի մօտ։

—Ես ուրիշ հարց չունիմ այլ ևս։

—Ես ունիմ, յայտնեց պաշտպանը։ Ասացէք ինձ, վկա՞լ, Մարիա Խվանօվնան, ի հարկէ, բացատրել է ձեզ, թէ ինչ միջոցներով կարող է ժողովուրդը թեթևացնել իր կարիքները։

—Միթէ օրիորդը գիտէ այդ բանը։

—Գիտէ։

—Ուրեմն գաղտնիքը իրա համար է պահել. ոչինչ չի ասել։

—Ներկայ դատապարութեան նպատակը, —ըսկեց դատախազը փափուկ, սրտառուչ ձայնով, —միայն ճշմարտութիւն գտնելն է։ Ես կաշխատեմ

իմ ճառի մէջ անկողմնապահ լինել, բայց չեմ կարող անզգայ լինել ժողովրդի գործը պաշտպանելիս: Ես պիտի խօսեմ սիրոյ ամենաբարձր տեսակի՝ հասարակական սիրոյ մասին, այն սիրոյ, որ տածում է ինտելիգենցիան դէպի ժողովուրդը: Ես կուզենայի, որ իմ արտայայտած մտքերը ընդունվէին ոչ միայն խելքով, այլ և՛ սրասվ, որովհետև գաղափարները այն ժամանակն են միայն բարերար հետեանք ունենում, այն ժամանակն են միայն մարդու ընթացքը ղեկավարում, երբ նրանք տիրապետում են մարդու զգացմունքներին: Սակայն նպատակիս հասցնող ճանապարհի վրայ կայ մի ծանրակշիռ խոչընդուռ: Մեր հասարակական զգացմունքները այնքան թոյլ են զարգացած, որ ես դժուարանում եմ լուսալ, թէ առանց հարկաւոր նախապատրաստութեան, իմ խօսքը կընդունուի բաց սրտերով. ալդ պատճառով ես կսկսեմ մի նմանողութիւնից, վերցնելով նրան զգացմունքների այն շրջանից, որոնց մենք բոլորս ընտելացել ենք, որոնցով մենք վշտանում եւ ուրախանում ենք: Ես կսկսեմ անձնական սիրուց, որպէս զի ձեր առաջ աւելի պարզ կերպով նկարուի մեղադրուողի լանցանքը, որ նա գործել է հասարակական սիրոյ դէմ:

— Երևակայեցէք ձեզ մի սիրահարուած պատանի: Սիրած օրիորդը նշանակել է տեսակցութիւն: Պատանին երազում է ալդ ժամի մա-

սին: Օրը պարզ է և տաք, բայց երեկոյան մօտ ցուրտը փչում է հիւսիսից, հաւաքում են ամպեր և անձրեսում է: Մեր պատանին մեծ դժուարութեան մէջ է: Նա իր կրկնակօշիկները տուել է կարկատելու, և ալժմ վախենում է առանց կրկնակօշիկի դուրս գալ տանից. կարելի է հարբուխ ստանալ: Այդ ի հարկէ դատարկ բան է. բայց նա մի ինչ որ քժշկական գըքոյկի մէջ կարգացել է որ հարբուխը կարող է փոխութիւն բրոնխիտի, ապա անցնել թոքերին, առաջ բերել բորբոքում, գուցէ թարախալից բորբոքումն և վերջանալ մահով: Պատանին սրտնեղութեամբ նայում է պատուհանին, որի ապակիները բաղիվում են անձրեի կաթիլներից և դատում է այսպէս. «Խոհեմութիւն չէ, որ մարդ իլ անձը ենթարկի այսպիսի վտանգի. նրան կարելի է վաղն էլ տեսնել, իսկ առողջութիւնդ, եթէ կորցնես, էլ յետ չի բերուի: Կարելի է գնալ և կառքով, բայց հակառակի պէս այսօր կօպէկ էլ չունիմ մօտս: Հարեանից մի քսան կօպէկ փոխառնեմ... բայց անլարմար է, ինչ կը մտածի նա...: Կարելի է կառքով գնալ և կառապանին ասել, որ նա վաղը կրկնապատիկ վճար կ'ստանայ. բայց կառապանը կարող է հաւատ ընծայել ինձ և սկանդալ առաջ բերել: Գրաւ դնեմ նրա մօտ մի թէլի գգալ կամ ժամացոյցս, իսկ եթէ նա յետոյ ըլ վերադարձնի...»: Խոչընդուների մի ամբողջ շարք է բացվում թշուառ պատանու առաջ. հարբուխը,

որ կարող է նրա թանկագին անձին մահ պատճառել. հարևանի կարծիքը քսան կօպէկ փոխ առնելու առթիւ, սկանդալը, որ կարող է առաջ բերել կառապանը, արծաթեալ գդալ կորցնելու վըտանգը: Մեր պատանին հերոս չէ. նա ինքն իւր մասին ասում է. «Ես փոքրիկ մարդ եմ». խոչընդունելը չեն գրգռում նրա եռանդը, այլ ստիպում են կորանալ: Անիշելով անձեւը, նա մնում է տանը, միմիթարուելով այն մտքով, որ «նա» կը գովի նրան իւր խոհեմութեան համար: Իսկ «նա» հետեւալ օրը լսելով խոհեմ պատանեակի բացատրութիւնները, կը խնդրի, ի հարկէ, որ նա չը լաճախի նրա մօտ այլ ևս ոչ վատ և ոչ էլ լաւ եղանակին: Եւ իրաւ, այդ թնջուկ տեսակ սիրահար է, որ հրաժարվում է իր սիրելուն տեսութեան գնալուց առաջին պատահած արգելքի պատճառով:: Պատանին ասում է, որ սիրում է «նրան». բայց դա սիրոյ ողորմելի և խեղկատակ նմանութիւնն է և ոչ թէ սէր: Խոչընդունելի դէմ մղած կոիւն է միայն, այն կոիւր, որ թոյլ չէ տալիս նահանջելու մասին մտածել անգամ, նա է, որ արտայատում է սիրոյ ոյժը, որով պայմանաւորվում է սիրոյ յաղթանակը:

—Անցնում եմ այժմ սիրոյ մի այլ տեսակին: Երիտասարդ այրին սիրում է իւր երեխաններին, գոնէ անկեղծօրէն հաւատացնում է որ այդպէս է. նրա երեխանները սակաւարիւն են, հիւան-

դու, նրանց սպասում է ողորմելի ապագայ և վաղաժամ մահ, եթէ մայրը հարկաւոր միջոցներ ձեռք չառնի: Բժիշկը յայտնել է նրան այդ միջոցները—մաքուր օդ և սննդարար կերակուր: Մայրը տանում էր երեխաններին զբօնելու այն կանաչ բլակի վրա, որ գտնվում է նրա բնակարանից ոչ հեռու, բայց կամակոր տիմարի մէկը արգելեց նրան այդ, և նա լրութեամբ հնագանգուեց, որ նոր հոգսերից, նոր անախորժութիւններից ազատ մնալ: Նա միմիթարուեց այն մտքով, որ երեխաւքը կարող են առան պարտիզակում» զբօնել, իսկ այդ պարտիզակ» ասածդ մի խոր արկղ է քարաշէն պատերով, որի յատակի վրայ ճռզած կանգնած են երեք եղենի ծառ, իսկ ծաղկոցի փոխարէն բուրում է կեղտաջրի փոսը: Մայրը տալիս է երեխաններին օրեկան կէս բաժակ կաթ. երբ նրան նկատում են, որ դրանով առողջութիւն վերականգնել չի կարելի, նա պատասխանում է. «Թնջ անեմ. Ես միջոց չունիմ. աւելի լաւ է գոնէ մի բան տալ, քան ոչինչ»: Բայց եթէ միջոցներ չը կան, առողջ, ուժգին սէրը միշտ կարող է նրանց ձեռք բերել: Այս մայրն էլ կարող է միջոցներ գտնել, բայց դրա համար հարկաւոր է հազար վերստ ճանապարհ գնալ երկաթուղով և ձիով, իսկ նա ջղալին տիկին է. վախենում է երկաթուղուց, որովհետեւ երբեմն գնացքների ընդհարումն է պատահում. վախենում է կառապաններից, որովհետեւ կարող են սպանել նը-

բան։ Նա կը հիւանդանայ և կը մեռնի այդչափ
հեռաւոր և վտանգալից ճանապարհորդութեան
արհաւիրքներից, իսկ երեխաների համար այդ ա-
ւելի վատթար կը լինի. ոչ, աւելի լաւ է քչով բա-
ւականանալ...։ Բայց, պարոններ, միթէ սէր է
այն խղճալի զգացմունքը, որ ընկճվում է արդելք-
ների առաջ, որ չէ ստիպում մարդուն կոփւ մղել
սիրելի էակի բախտաւորութեան համար։ Ո՛չ, այդ
մի ինչ որ սառն, անկերպարան բան է, ինչպէս
ամպը. մի ինչ որ ողորմելի և անկենդան զգաց-
մունք է, որ մարդու մէջ զարթեցնում է ցա-
ւակցութիւն և զայրովթ։ Ահա այս մեռած սիրոյն
է նմանում ժամանակակից ուսուցիչների և վար-
ժուհիների այն սէրը, որ նրանք արտայայտում են
դէպի հասարակ ժողովուրդը, վարժուհիներ, որոնց
տիպիքական ներկայացուցիչն է մեղադրուողը։ Նը-
րանք, իբրև մասնագիտութիւն, իրանց համար ընտ-
րել են մանկավարժական գործունէութիւնը, հաս-
կանալով, որ ժողովրդի բարօրութիւնը կախուած է
լուսաւորութիւնից։ Ինչպէս ամեն մի գործնական
քայլում, այս գործումն էլ նրանք հանդիպում են
խոչնդոտների, բայց նրանց դէմ կոփւ մղել նը-
րանք չեն ցանկանում։ Նրանց սէրը դէպի ժողո-
վուրդը այնքան թոյլ է, որ կարող է արտայայ-
տուիլ միայն, երբ ոչինչ արդելք չը կայ։ Այդ պատ-
ճառով էլ նրանց ողջ գործունէութիւնը կալանում է
միայն մանկավարժութեան պահանջներից շեղուե-

լու մէջ։ Զիջման առաջին քայլն անելուց՝ նը-
րանք ասում են. «Ե՞հ, սա մի դատարկ բան է.
զիջել անհրաժեշտ է, որպէս զի կարողանանք օդ-
տաւէտ գործը մեր ձեռքում պահել։ Բայց հե-
տևեալ օր երեան է գալիս մի ուրիշ «դատարկ
բան», մի օր յետոյ՝ մի քանի այդպիսի դա-
տարկ բաններ, իսկ այդ դատարկ բանների գու-
մարը մինչ այն աստիճան աղաւաղել է ժողո-
վրդի տգիտութեան սրտացաւների գործունէու-
թիւնը, որ նրա նպատակը—մտաւոր զարգացումը
—անհետացել է և նրա տեղը բռնել է միջոցը՝
ինքնաբաւարար գրադիտութիւնը։ Եւ իրանք էլ
զգում են այդ, բայց սփոփում այս մտքով,
«Քնչ անենք. մենք գոնէ մի բան էլ է տա-
լիս ենք ժողովրդին։ իսկ մի բանը աւելի լաւ
է, քան ոչինչը»։ Զե՞ն յեշեցնում ձեզ այսպիսի ման-
կավարժները այն հարուստ վաճառականին, որ ի-
րան ճշմարիտ քրիստոնեայ է երեակայում, որով-
հետև մեծ տօներին եկեղեցուց դուրս գալիս ամեն
մի աղքատի մի կօպէկանոց է տալիս։ Եւ այս ին-
քնագոյնութիւնը, այս «գոնէ մի բան»-ի հետ հաշ-
տուիլը համարում են դէպի ժողովուրդը ունեցած
սիրոյ արտայալտութիւն։ Այս, դա այն սէրն է, որ
վախենում է հարբուխից, երկաթուղուց և կառա-
պաններից...։ Եւ ինչ է ուսումնարանը այդ ման-
կավարժների համար, որոնք կարող են հաշտուիլ
ագոնէ մի բան» սկզբունքի հետ։ Մի քանսի հա-

մար ապրուստի միջոց է՝ միւսների համար այնպիսի
միջոց, որ լցնում է նրանց դատարկ օրը։ Դաս ա-
ւանդելով, դատողութիւններ տալով թեք և ուղիղ
գրութեան մասին, կամ այն նիւթի, թէ ինչ պէտք
է կարդալ ժողովրդի համար, նրանք ազատվում
են անգործութեան ձանձրութից։ Նրանք անօդ
տարածութեան մէջ կը զգան իրանց, եթէ գոցես
նրանց ուսումնարանը, դադարեցնես նրանց յան-
ձնաժողովների և խորհուրդների նիստերը...։ Եւ
ահա նրանք ուսումնարանի համար, նրանց հարկա-
ւոր է ունենալ մի տուն «ուսումնարան» ցուցա-
նակագրով, որտեղ կարելի լինէր ուսուցման գոր-
ծողութիւնը կատարել, թէկուզ նա նպատակին չը
հասցնի էլ. դրա համար էլ նրանք հաշտվում են
«գոնէ մի բան» մտքի հետ և պահանջ չեն զգում
հեռացնելու այն արգելքները, որոնք թուլ չեն տա-
լիս իրանց ուսումնարանը մանկավարժութեան պա-
հանջների հիմունքի վրայ դնելու։ Նրանք յափշտակ-
ուած են միայն դասատվութեան գործողութեամբ
որովհետև այդ նրանց բաւականութիւն է պատ-
ճառում և չեն հետաքրքրվում նրա հետևանքնե-
րով։ Նրանք գոհ են, որ դրագէտների թիւը մե-
ծանում է, թէև ոչ նշանաւոր չափով։ Բայց, պա-
րոննե՛ր, կարող է մի վարժութիւն պնդել, թէ նա
կատարել է իւր պարտականութիւնը, երբ նրա ա-
շակերտները մասնակցում են խոլերային անկար-

գութիւններին, վախենում են սատանալից և կա-
խարդից, իսկ ժողովրդի կարիքներին վերաբերեալ
հարցերը վճռում են՝ «երևի այս է մեր ճակատա-
գիրը» խօսքերով։ Կարող է ինքնագոհ լինել մի
վարժութիւն, երբ նրա աշակերտուհին պարծենում
է, որ նա իւր ամուսնու գլխից գուրս է հանել նրա
լիմարութիւնը, մի բառ, որ նա գործ է ածում
«քննադատաբար մտածել» խօսքի տեղ։ «Գոնէ մի
բան»։ Ո՞չ, եթէ այս բառեր կրկնողները աւելի
յաճախ տեսնէին ժողովրդական կեանքի տրագեդիան
ոչ թէ բեմի վրայ, ոչ թէ վեալերի մէջ կամ ստատիս-
տիքական աղիւսակներում, այլ իրական կեանքի
մէջ... Միլիօնաւոր մարդկալին արարածներ ծըն-
վում են նրա համար միայն, որ կործանիչ չքա-
ւորութեան պայմաններին գոհուին իրանց մանկու-
թեան հէնց առաջին տարիներում։ Միւս միլիօն-
ները կենդանի են մնում. բայց ինչ է նրանց կեան-
քը։ Դա անընդհատ մի չարչարանք է չը մեռնելու
համար. մի աշխատանք, բայց ոչ այն, որ կենդա-
նացնում է մարդուն, զարգացնում է նրա ընդու-
նակութիւնները, որ տալիս է մարդուն ինքնուրոյ-
նութեան զգացմունք, որ ուրախացնում է մար-
դուն ուրիշներին պատճառած օգուտով... — դա
մարդուն տարկացնող աշխատանքն է. դա «հողի»
և «կուպօնի» սոսկալի իշխանութիւնն է, որ մար-
դուն մշակող անասուն է դարձնում։ Մենք գիտենք,
որ առանց գիտութեան, առանց քննական մտքի

եռանդուն աշխատութեան, երբէք վերջ չի ունենալ ժողովրդական կեանքի այդ սարսափելի տրագեդիան, և որ «Հողի ու կուպօնի իշխանութիւնը» կանչետանայ ժողովրդի խելահաս հաւաքական անձնաւորութեան առաջ միայն: Մարդկալին անձնաւորութեան իրաւունքների գիտակցութիւնը վաղուց արդէն ապրում է ամենալաւ մարդկանց մտքի մէջ, բայց ոյժը այդ իրաւունքի կողմը չէ, իսկ առանց ոյժի և իրաւունքի համերաշխութեան չեն կարող իրականանալ մարդկալին հանրակեցութեան իդէալները: Դիսկ երբ գիտութեան լուսը կը սփռուի ամբողջ աշխարհի վրայ, այդ թշնամիները կը միանան հոգեկան շաղկապով և իրաւունք—ոյժը երկրի մէջ կը հաստատէ այն, ինչով մարդիկ գերազանցում են կենդանիներից — արդարութիւնն: Այս թէ ինչու «ժողովրդական լուսաւորութիւն» բառերը այնպէս երկիւղածութեամբ են արտասանվում: Դա ժողովրդի բաղդաւորութեան թալիսմանն է, իսկ ինտելիգենցիան՝ այն կախարդը, որ պէտք է ժողովրդին տալ այդ: Բայց այդ թալիսմանը զօրաւոր է միայն այն ժամանակ, երբ նա տրվում է ամբողջութեամբ, կենդանի ձեռվլ: Հաց թիսել կարելի է և ծառի կեղեից, բայց այդ կը լինի հացի վնասակար կեղծիքը միայն: Կարելի է տարածել ուսում, կրթութիւն, որ մարդու մէջ քննադատական մտածողութիւն զարթեցնելու լատկութիւնից զուրկ է, բայց դա

ուսում չի լինի, այլ միայն նրա կեղծիքը, դա նման կը լինի մի գինու, որից հեռացրել են նրա ալկօհօլը, դա կը լինի օդ՝ առանց թթուածնի: Մեղադրուողը ղեկավարուելով «գոնէ մի բան» տալու սկզբունքով՝ իւր աշակերտներին մատուցանում է հոգեկան հացի կեղծիքը միայն. ես կարծում եմ, որ դա մի այնպիսի վարմունք է, ինչպիսին է կեղծ դրամով պարտք վճարելը:

— Մեղադրեալին այսչափ ծանր յանցանքի մէջ չէի մեղադրիլ ես, եթէ նա պատկանելիս լինէր թշուառների այն շրջանին, որ չէ կարողանում ջոկել բարին ու չարը, որոնց ողջ կեանքը անցնում է սնդիտակցութեան մէջ: Ո՛չ, մեղադրուողը գիտէ թէ ինքը ինչ է անում: Նա կը թուած մարդ է: Ուսուցման ծրագիրների քննութեան ժամանակ նա միանգամայն կանոնաւոր կերպով է բաժանում առարկաները երկուսի — մտածողութիւնը զարգացնող և նրան խանգարողներ: Նա լաւ հականում է սնոտիապաշտութեան վնասը. բայց ինչ ենք տեսնում մենք: Ներկայ գործի մէջ գտնուած տեղեկագրից (որ վերաբերում է նրա պարապմունքներին) երևում է, որ նա ինքն էլ աւանդում է սնոտիապաշտութիւն, միայն թէ դասից չը զըկուի: Դա մի յանցանք է, որ կատարվում է գիտակցորէն: Մեղադրուողը գիտէ, որ իրա աշակերտները և աշակերտուհիները դուրս են գալիս ուսումնարանից առանց կանոնաւոր մտածելու կարողութիւն

Ճեռք բերելու, և այս հանգամանքը չէ վրդովում նրա բարեհոգութիւնը, որովհետև նա ուսումնարանը սիրում է հենց ուսումնարանի համար, գիրքը՝ գրքի համար. որովհետև ուսուցման գործողութիւնը գրգռում է նրա նեարդերը և ապրելու միջոց է տալիս: Նա ասում է, որ սիրում է ժողովուրդը, բայց նա իսկապէս միայն իրան է սիրում, քանի որ հոգեկան հացի փոխարէն նա ժողովրդին տալիս է այն կեղծիքը, որ կոչվում է «գոնէ մի բան»: Դա այն սէրն է, որ ոչ լուսաւորում է, ոչ տաքացնում: Բայց Եթէ մեղադրուողը սարսափում է ժողովրդական կեանքի տրագեդիան տեսնելով՝ և գիտէ որ այդ կեանքի ողբերգական կողմը կարող է անհետանալ միայն քննադատական մտքի լրիսից, Եթէ այդ իմանալով հանդերձ՝ նա դարձեալ հաշտվում է իւր աշակերտներին «գոնէ մի բան» տալու մտքի հետ, ինչպէս ալդ պարզուեց դատաստանական քննութեան ժամանակ, ապա ես իրաւունք ունիմ նրան մեղադրելու ինչպէս մի վարժուհու, որ իւր պարտաւորութիւնները չէ կատարել միանգամայն գիտակցելով այդ բանը»:

Մի քանի վայրկեան լուր էր ամբողջ դահլիճը, բայց յանկարծ թնդաց ուժգին ծափահարութիւններից...: Մարիա Իվանօվնան, կարծես, քարացաւ...: Նա տեսնում էր, որ իւր ընկերուհիներից շատերը նոյնպէս շառագունուած դէմքերով բարձրաձայն արտայատում են իրանց համակրան-

քը դատախազին... Նա զգաց որ ամենքը թողել են իրան, և սարսափեց: Նա ցնցուեց պաշտպանի խօսքերից:

—Ես ենթադրում էի, սկսեց նա, իմ պաշտպանողական ճառը հիմնել այն բանի վրայ, որ մեղադրուողը «փոքրիկ մարդ է», որից չի կարելի մեծ բան պահանջել: Բայց ես համոգուեցի, որ նա չէ կատարում նոյն իսկ իւր «փոքրիկ գործը». Նա մոռացել է ուսումնարանի նպատակը, մանկավարժութեան պահանջները: Ե՞ս նոյնպէս ճշմարտութիւնն եմ որոնում, ինչպէս և՝ դատախազը: Մեղադրանքը ես կանոնաւոր եմ համարում, այդ պատճառով էլ հրաժարվում եմ պաշտպանելուց:

Իսքը Մարիա Իվանօվնան ոչ մի բառ չարտասանեց: Երդուեալների աւագը վերկացաւ տեղից և յալտնեց, որ ինքն և իւր ընկերները միաձայն հաւանութիւն են տալիս մեղադրանքին:

— Խօսքի հերթը ձերն է, գիմեց նախադահը դատախազին. Բնչ պատժի է ենթակայ մեղադրուողը:

— Մի հատ արդար պատիժ կայ միայն, — ըսկսեց դատախազը. — այդ պատիժը գըուած չէ ոչ մի քրէական օրինագրքի մէջ, բայց նա միակ ուղղիչ պատիժն է: Խօսքս խղճահարութեան մասին է: Եթէ մեղադրուողը ինքն իրան մեղաւոր չէ ճանաչում, Բնչ միտք ունի նրան որ և է բանով պատժել: Բայց կարծում եմ, որ զղջման արտասուքները եռ կը գան նրա սրտի մէջ և այսուհե-

տեւ նրա գործունէութեան նշանաբանը կը լինի ոչ
թէ «գոնէ մի բան», այլ «բոլորը», «ամբողջը»:

—Մեղադրու՞ղ, ազատ էք դուք. կարող էք
տեղ բռնել հանդիսականների մէջ, ասաց նախա-
դահը:

Բայց Մարիա Իվանօվնան չէր շարժվում տե-
ղից: Սառնութիւն եկաւ նրա վրայ և ամօթից սառ-
տիկ կարմրեց նրա դէմքը և պարանոցը...: Նա
ուզում էր փախչել այդ դաշլճից...: Նա վեր թը-
ռաւ իւր տեղից և... զարթեց:

Արեգակի ուրախ ճառագայթները խաղում էին
նրա սենեակում:

—Ի՞նչ սարսափելի երազ էր, մտածեց Մա-
րիա Իվանօվնան. նրա սիրտը արագութեամբ բաբա-
խում էր:



